

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Ա. Լուս Անջելես Քաղաքի Բնակարանվորման Իշխանությունը (HACLA) զգայուն է Սահմանափակ Անգլերեն Իմացող (Limited English Proficiency/LEP) անձերի նկատմամբ, ներառած՝ դիմողները, մասնակիցները և բնակիչները, ովքեր վարձակալում են HACLA-ին պատկանող բնակարաններ:
- Բ. Համաձայն Դաշնային, Նահանգային և Տեղական օրենքների, հատկապես Վարչական հրահանգ 13166-ի, HUD-ի Ցուցմունքի (Դաշնային Տոմար 4878-N-02 – հունվարի 22, 2007) և Կալիֆորնիայի Կառավարական Օրենսգրքի 7290 և հաջորդ հոդվածների (“Dymally Alatorre Act”) և Կալիֆորնիայի Քաղաքացիական Օրենսգրքի 1632 հոդվածի, HACLA-ն տրամաբանական քայլերի կոդիֆի երաշխավորելու համար LEP անձերի համար իր ծրագրերի իմաստալի մատչելիությունը:
- Գ. Իմաստալի մատչելիությունը կայանում է անվճար լեզվական օգնության մեջ, համաձայն դաշնային ցուցմունքների: HACLA-ն պարտավոր է LEP ծառայություններ ընձայել՝ համաձայն չորս գործոնների վերլուծության: Այդ գործոններն են՝
  - 1. Ծառայություն ստացած կամ ծառայություն ստանալու թեկնածու ոչ-անգլիախոս անհատների ընդհանուր քանակը կամ համեմատությունը.
  - 2. HACLA-ի հետ կապ հաստատելու հաճախականությունը.
  - 3. Ծառայության կամ նպաստի բնույթն ու կարևորությունը. և
  - 4. Առկա աղբյուրները և ծախսը, որին կենթարկվի HACLA-ն:
- Դ. Նահանգային և Դաշնային ցուցմունքները հետևյալ հարցերի որոշումը թողնում են տեղական հանրային գործակալության հայեցողությանը՝
  - 1. Ի՞նչն է կազմում հիմնական, բավարար և անհրաժեշտ քանակ երկլեզու պաշտոնյաների.
  - 2. Ե՞րբ է առկա մեկ լեզու խոսող LEP անհատների բավարար բնակչություն՝ փաստաթղթերի թարգմանություն պահանջելու համար.
  - 3. Ո՞ր փաստաթղթերը թարգմանել. և
  - 4. Ե՞րբ կարելի է LEP անհատին ընձայել թարգմանական ծառայություններ. և
  - 5. Ինչպե՞ս պետք է ընձայել LEP ծառայությունները:

- Ե. HACLA-ն կջանա երաշխավորել ծրագրի ծառայությունների հավասար ընծայում՝ անկախաբար նրանից, թե ծրագրին դիմողը, մասնակիցը կամ բնակիչը անգլերեն է խոսում, թե՛ կարիքը ունի LEP ծառայությունների: Դրան հասնելու համար, HACLA-ն կերաշխավորի, որ ողջ անձնակազմը ծանոթ լինի LEP քաղաքականության և որ տարեկան վարժություններ կատարվեն այն անձնակազմի համար, որը ուղղակի գործ է ունենում դիմողների, մասնակիցների կամ բնակիչների հետ:
- Զ. Ծրագրավորման Տնօրենը կամ նրա նշանակած անձը կգործի որպես LEP Համակարգող գործակալության համար: LEP քաղաքականության տնօրինմանը վերաբերվող որևէ գանգատ պետք է ուղղվի LEP Համակարգողին:
- Է. LEP քաղաքականության մասին տեղեկությունը հանրության մատչելի պետք է դառնա HACLA-ի Կայքէջի միջոցով և Ծանուցագրեր պետք է կայցվեն պատերին այն գրասենյակների, որոնք ծառայում են ինչ-որ տվյալ լեզվի: Եթե Ծանուցագիրը առկա չէ դիմողի կամ մասնակցի առաջնային լեզվով, ապա տեղում թարգմանություն պետք է ընծայվի: Քաղաքականությունն ամփոփող *Ծանուցագրեր* պետք է ընդգրկվեն նաև դիմումի և վերանայման փաթեթներում:

## II. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. Այս քաղաքականությունը տարածվում է բոլոր HACLA-ին պատկանող բնակարանների դիմողների, մասնակիցների կամ բնակիչների վրա, ընդգրկելով՝ առանց սահմանափակման՝ Հանրային Բնակարանավորման ծրագիրը, Հատված 8 Բնակարանավորման Ընտրովի Վաուչերի Ծրագիրը, Նախագծերի Վրա Հիմնված Վաուչերը, HOPWA-ն, Shelter Plus Care-ը և HACLA-ին պատկանող ուրիշ բնակարաններ:
- Բ. LEP ծառայություններ ընծայելու պահանջումները կկիրառվեն անկախ նրանից, թե ինչպիսին է անհատի քաղաքացիական կամ գաղթականական կարգավիճակը:

## III. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- Ա. «Դիմողները» ընդգրկում է HACLA-ի կողմից տնօրինվող որևէ ծրագրի դիմողներին:

- Բ. «Ձեռնհաս» նշանակում է Լեզվական Ծառայությունների ընծայումը մի անձի միջոցով, որը տիրապետում է ն' անգլերեն և' օգտագործվող ոչ-անգլերեն լեզուներին: Ձեռնհաս լինելու համար բանավոր կամ գրավոր թարգմանություն ընծայող անձը պետք է ծանոթ լինի մշակութային տերմինների, HACLA-ի կողմից օգտագործվող տերմինների, և հավատարիմ մնա թարգմանչի իր դերին:
- Գ. «Բանավոր թարգմանությունը» մեկ լեզվով ներկայացված բանավոր կամ խոսակցական տեղեկության ձեռնհասորեն ընդունումը և այդ տեղեկության բանավոր կերպով ճշգրտորեն հաղորդումն է մի ուրիշ լեզվով:
- Դ. «Բանավոր թարգմանը» նշանակում է մի անձ, ոչ դեռահաս, որը կարող է սահուն խոսել և լրիվ հասկանալով կարդալ և' անգլերեն և' LEP դիմողի, մասնակցի կամ բնակչի լեզուներով:
- Ե. «Լեզվական Ծառայությունները» կամ «Լեզվական Օգնությունը» նշանակում է բանավոր կամ գրավոր ձեռնհաս լեզվական թարգմանության ընծայումը:
- Զ. «LEP» անհատը մի այնպիսի անձ է, որը ճանաչվել է որպես LEP անձ, անգլերեն չի խոսում որպես առաջնային լեզու, և ունի անգլերեն կարդալու, գրելու, խոսելու և հասկանալու սահմանափակ կարողություն:
- Է. «Մասնակիցները» ընդգրկում է HACLA-ի կողմից տնօրինվող որևէ ծրագրի ներքո վավերացված մասնակիցներին, որոնք տարբերվում են HACLA-ին պատկանող բնակարանների վավերացված վարձակալներից:
- Ը. «Հանրային Կապի Պաշտոնը» մի պաշտոն է, որն ընդգծում է HACLA-ի գործունեությունների ծիրում հանրության հետ հանդիպելու, կապ հաստատելու և գործ ունենալու կարողությունը:
- Թ. «Բնակիչները» ընդգրկում է HACLA-ին պատկանող բնակարանների վավերացված վարձակալներին:
- Ժ. «Տեղում Թարգմանությունը» նշանակում է մի փաստաթղթի բանավոր թարգմանությունը անգլերենից մի ուրիշ լեզվի: Տեղում թարգմանությունը ներառում է թարգմանությունը ամեն մի բառի, ո'չ ամփոփումը: Սյուսիանդերձ, տեղում թարգմանության դեպքում, մշակութային և տեխնիկական հարցերի պատճառով, կարող է լրացուցիչ բացատրություն պահանջվել և դա քաջալերվում է:

- ԺԱ. «Հիմնական Լեզուն» մի լեզու է, որը խոսվում է բավարար քանակությամբ համայնքի անդամների կողմից, ովքեր ունեն HACLA-ի ծառայություններին իրավասու լինելու պոտենցիալը, արդարացնելու համար երկլեզու աշխատողների պաշտոնի կոչելը և փաստաթղթերի թարգմանությունը, ինչպես այն նախատեսվում է այս քաղաքականությունում:
- ԺԲ. «Գրավոր Թարգմանությունը» նշանակում է գրավոր նյութերի մեկ լեզվից վերածումը մի ուրիշ լեզվի գրավոր կերպով:
- ԺԳ. «Կենսական Փաստաթղթեր» են նրանք, որ կրիտիկական են երաշխավորելու համար ընդհանրապես նպաստընկալների կամ պոտենցիալ նպաստընկալների և հատկապես LEP անձերի իմաստալի մատչելիությունը:

#### IV. ՈՐՈՇԻՉ ԿԱՐԻՔԸ

LEP ծառայությունների ընծայման կարիքը կորոշվի հետևելով պոտենցիալ դիմող, դիմող, մասնակից և բնակիչ բնակչություններին:

- Ա. Դիմումի կամ առաջին հարցազրույցի ընթացքին, որը որ առաջ պատահի, դիմողներից կլինողվի նշանակել իրենց և՛ գրավոր և՛ բանավոր առաջնային լեզուն և թե LEP ծառայություններ պահանջվո՞ւմ են:
- Բ. Մասնակիցներից յուրաքանչյուր տարեկան հարցազրույցի ժամանակ կլինողվի նշանակել իրենց առաջնային լեզուն և իրենց նախասիրած LEP ծառայությունները՝ և՛ գրավոր և՛ բանավոր ծառայությունների համար:
- Գ. HACLA-ին պատկանող բնակարանների յուրաքանչյուր բնակչի ամեն մի տարեկան վերանայման կամ ավելի շուտ հաստատված կապի ժամանակ հարց կտրվի նրա առաջնային լեզվի և նրա նախասիրած LEP ծառայությունների մասին՝ և՛ գրավոր և՛ բանավոր ծառայությունների համար:
- Դ. Յուրաքանչյուր փաստաթուղթ (թղթից, համակարգչում, ևայլն) պետք է կողավորվի և կնքվի, նշելու համար LEP կարիքը և նշանակված առաջնային լեզուն:

Ե. Ընդհանրապես, մի պայմանունակ LEP հիմնական լեզվախումբ, որը կազմում է ծառայության համար պայմանունակ բնակչության 5 տոկոսը կամ 1,000 անձ, որը որ ավելի փոքր է, համագոր է կենսական փաստաթղթերի թարգմանության կարիքի (եթե միջոցները թույլատրեն, ինչպես նշված է I Բ և V հոդվածների ներքո): Այսուհանդերձ, եթե կան 50-ից նվազ անձեր մի լեզվախումբում, որը հասնում է 5 տոկոսի մակարդակին, հնարավոր է, որ HACLA-ն գրավոր ծանուցագիր ընծայի առաջնային լեզվով LEP լեզվախմբի, որը իրավունք ունի ստանալու ձեռնհաս բանավոր թարգմանությունը այդ գրավոր նյութերի՝ գրավոր թարգմանության դիմաց:

Բացի այդ, HACLA-ին պատկանող և նրա կողմից ստորինվող ունեցվածքների համար հիմնական լեզուն կորոշվի ունեցվածք-առ-ունեցվածք մոտեցումով:

Զ. HACLA-ի Ծրագրավորող բաժանմունքը և LEP Համակարգողը ամեն տարի կվերանայեն ժողովրդագրական տվյալները՝ ինչ վերաբերվում է պոտենցիալ և ընթացիկ դիմողների, մասնակիցների և բնակիչների, գնահատելու համար, որ արդյո՞ք կա կարիքը թարմացված չորս գործոնների վերլուծության (ինչպես նշված է I Գ հոդվածում):

## V. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Բոլոր LEP դիմողները, մասնակիցները և բնակիչները իրավունք ունեն անվճար թարգմանական ծառայությունների՝ երբ հայտարարեն, որ կարիքը ունեն կամ երբ անձնակազմը նշմարի հաղորդակցության դժվարություն՝ նրանց խոսած լեզուն «հիմնական» լեզու համարվի կամ ոչ: Անձը որպես LEP ճանաչվելուց հետո, թարգմանական ծառայությունները մատչելի պետք է լինեն HACLA-ի հետ կամ նրա կողմից բոլոր շփումների ժամանակ:

Բ. Ինչքան դա հնարավոր է, HACLA-ն LEP դիմողի, մասնակցի կամ բնակչի համար կնշանակի ձեռնհաս երկլեզու անձնակազմ: Եթե անձի համար չի նշանակվել երկլեզու աշխատող, մի ուրիշ երկլեզու անձնակազմի անդամ կօգտագործվի թարգմանական ծառայություն ընծայելու համար: Այսպիսի ծառայություններ կարող են ընծայվել որևէ ազդու մեթոդով, ներառած՝ դեմ-առ-դեմ կամ հեռախոսով ծառայությունը:

- Գ. Երբ ինչ-որ գրասենյակ չունի անձնակազմի անդամ, որը կարող է ձեռնհաս բանավոր թարգմանության ծառայություն ընծայել մի հաճախորդի, անձնակազմը ձեռնհաս բանավոր թարգմանության խնդրանք պետք է ներկայացնի օգնական կառավարչին կամ ավելի բարձր պաշտոնյայի: Դրսից բանավոր թարգմանական ծառայությունները կարող են ընդգրկել պայմանագրով բանավոր թարգմանություն կատարողներ, հեռախոսային բանավոր թարգմանության ծառայություններ կամ համայնքային վավերացված կամավորներ: Օգտագործման դեպքում, դրսից բանավոր թարգմանական ծառայությունների համար HACLA-ն ինքը պետք է վճարում կատարի:
- Դ. Անպաշտոն բանավոր թարգմանիչների օգտագործումը, ինչպես՝ ընտանիքի անդամները (ներառած՝ դեռահասները), ընկերները, օրինավոր խնամակալները կամ LEP անձի պաշտպանները, ընդգծված կերպով ապաքաջալերվում է: Օգտագործման դեպքում, նրանք պետք է սահմանափակվեն ստիպողական վիճակներով և պետք է լինեն կարճ և փոխանցումային (օրինակ, ճանաչելու համար խոսված լեզուն):
- Ե. HACLA-ի անձնակազմը պարտավոր է միշտ անվճար թարգմանություն առաջարկել: Եթե լեզվական ծառայությունների առաջարկից հետո LEP անձը նախընտրի անպաշտոն բանավոր թարգմանիչ, LEP անձը պարտավոր է ստորագրել LEP-ի նախապիրված լեզվի կամ տեղում թարգմանության միջոցով անվճար լեզվական ծառայություններից հրաժարվելու փաստաթուղթ: LEP-ի կողմից հրաժարման փաստաթուղթը ստորագրվելուց հետո, անպաշտոն բանավոր թարգմանը կարող է թարգմանել: Հնարավորության դեպքում, HACLA-ի անձնակազմի անդամը, որը խոսում է LEP-ի լեզուն, պարտավոր է հետևել բանավոր թարգմանության, երաշխավորելու նրա ճշգրտությունն ու ամբողջականությունը: HACLA-ի բանավոր թարգմանը պետք է նաև ստորագրի հրաժարման փաստաթուղթը, վկայելու համար թարգմանության ճշգրտության մասին:
- Զ. Թարգմանական ծառայությունների համար խնդրանքները կարող են կատարվել դիմողի, մասնակցի, բնակչի, բնակչի պաշտպանի, Բնակչի Խորհրդատու Խորհրդի (RAC), Բնակչի Կառավարման Կորպորացիայի (RMC), Հատված 8 Խորհրդատու Խորհրդի (SAC), կամ նրանց փոխարինող մարմինների կողմից, երբ ուղղակի առնչություն ունեն HACLA ծրագրի գործունեությունների հետ:

**VI. ԶԵՎԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- Ա. HACLA-ի բոլոր «կենսական» նկատված ձևաթղթերը և փաստաթղթերը, ինչպես դա սահմանված է HUD ցուցմունքներով, պետք է թարգմանվեն անգլերենից հիմնական լեզուների, ինչպես սահմանված է I Բ հոդվածով: HACLA-ն նաև կենսական փաստաթղթերը կթարգմանի ուրիշ լեզուների՝ եթե միջոցները թույլատրեն:
- Բ. «Կենսական» ձևաթղթերը և փաստաթղթերը ընդգրկում են, առանց սահմանափակումի՝

  1. HACLA-ի ծրագրի կամ գործունեության մասնակցելու կամ HACLA-ի նպաստներ կամ ծառայություններ ստանալու դիմումնագրերը.
  2. Հավանության և գանգատի ձևաթղթերը.
  3. Ընդունման ձևաթղթերը.
  4. Իրավունքների, պարտավորությունների, մերժման, կորստի կամ նպաստների կամ ծառայությունների նվազեցման և լուսմների գրավոր ծանուցագրերը.
  5. LEP անձերին անվճար լեզվական օգնության խորհուրդ տվող ծանուցագրերը.
  6. Հանրային լուսմի ծանուցագրեր, հատկապես այնպիսիք, որոնք լրացնում են քաղաքացու՝ Համայնքային Ծրագրավորման և Զարգացման մասնակցության պայմանները.
  7. Վարձակալման և վարձվորի կանոնակարգեր.
  8. Բնակարանից հեռացվելու ծանուցագրեր.
  9. Տեղեկատու բնույթի նշաններ.
  10. HACLA-ի կողմից նամակներ, որոնք դիմողից, մասնակցից կամ բնակչից խնդրում են ինչ-որ քայլի դեմել. և
  11. Որևէ ուրիշ փաստաթուղթ, որը կենսական է նկատվում HACLA-ի կամ իր անձնակազմի կողմից:
- Գ. LEP-ի դիմողը կամ մասնակիցը/բնակիչը կստանա որևէ «կենսական» ձևաթուղթ և փաստաթուղթ իր առաջնային լեզվով, եթե՝

  1. Դիմողը, մասնակիցը կամ բնակիչը հայտարարել է, որ կարիքը ունի և/կամ անձնակազմը նշմարել է անգլերենով հաղորդակցելու դժվարություն. և

2. Այս փաստաթղթերը թարգմանվել են ըստ այս քաղաքակա-նության I Ա և Բ հոդվածներում նշված կարգի:
- Դ. Որտեղ հնարավոր է, թարգմանությունը կտպագրվի անգլերեն տարբերակի հակառակ երեսին:
- Ե. Եթե կենսական փաստաթուղթը չի թարգմանվել, HACLA-ն դիմողին, մասնակցին կամ բնակչին կընծայի տեղում թարգմանություն: Եվ որևէ փոստով ուղարկված փաստաթուղթ պետք է ընդգրկի անվճար թարգմանական ծառայությունների ծանուցագիրը (ուրվագծված վերևի V Ա հոդվածում):
- Զ. HACLA-ի կալվածների համար վարձակալագիր ստորագրելիս, բնակիչը պետք է ստորագրի վարձակալագրի անգլերեն տարբերակը: Եթե ընտանիքի մեծավորի առաջնային լեզուն հիմնական լեզու է, նա պետք է ստանա վարձակալագրի պատճենը այդ հիմնական լեզվով և նրան ժամանակ պետք է հատկացվի՝ փաստաթուղթը կարդալու իր առաջնային լեզվով՝ նախքան այն ստորագրելը:

## VII. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՇԽԱՏՍՏԵՂԵՐ

- Ա. HACLA-ն կջանա աշխատանքի ընդունել բավարար քանակությամբ վկայված երկլեզու պաշտոնյաների՝ հանրային կապի պաշտոններում, երաշխավորելու համար LEP դիմողների, մասնակիցների և բնակիչների համար տեղեկության և ծառայությունների ընծայումը:
- Բ. Մարդուժի Բաժանմունքը կպահպանի անվանացանկը պաշտոնյաների, ովքեր բանավոր և գրավոր թարգմանության մարզերում վկայված լեզվին տիրապետող թարգմանիչներ են, որոնց HACLA-ն վարձատրություն է տալիս՝ երկլեզու ծառայություններ ընծայելու համար:
- Գ. HACLA-ի վկայված երկլեզու պաշտոնյաներից թերևս պահանջվի, որ ծառայություններ ընծայեն իրենց համար նշանակված աշխատավայրից տարբեր աշխատավայրում, ըստ իրենց վերակացուի հայեցողության: